

բազմից Փիլիպպոս, որ 1629ին կը շրջէր Վասպուրական, կ'երեւայ թէ ունէր Կաթողիկոսէն մասնաւոր յանձնարարութիւն ոչ միայն Սահակ Կաթողիկոսին հետ բանակցելու, այլ եւ մտնելու Աղթամարայ Ստեփանոս Կաթողիկոսի (1616—1654) հետ բանակցութեան մէջ խաղաղական ճանապարհով բառնալու երկար տարիներու վէճը, որ կար — յատկապէս թեմական հոգերու շուրջը — էջմիածնի եւ Աղթամարի միջեւ:

Վէճը լուծուեցաւ: Աղթամար ճանչցաւ էջմիածնի Աթոռին ղերիշխանութիւնը եւ էջմիածին ղիջեց, որ Աղթամարայ Աթոռը չաբունակէ իւր Կաթողիկոսական տիտղոսը՝ իւր սեպհական թեմին մէջ, որուն սահմանները ճշդուեցան: Այս մասին մեր միակ աղբիւրն է Նիկողայոս զբչի յիշատակարանը, գրուած 1632ին Մաշտոցի մը վերջը. «Ի թվականութեան Հայոց ՌՁԱ. . . ի հայրապետութեան Հայոց էջմիածնայ տեառն Մովսէսի . . . եւ մերոյս Աղթամարայ տեառն Ստեփաննոսի, որ եբարձ գկրնիմն անհնազանդութեան եւ եղեւ հլու եւ հպատակ լուսանկար եւ գրիգորաշէն սուրբ էջմիածնայ եւ էառ գօրհնութիւն Լուսաւորչին ի գլուխ իւր եւ ի ծոց դուզնաքայ փոքրիկ հաւտին իւրոյ. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի եւ աղօթիւք սուրբ Լուսաւորչին նոր հնազանդեալ որդիացելոցս ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր»:

Այս մասին է հաւանօրէն Սիմէոն Սոյ Կաթողիկոսին ակնարկութիւնը առ Փիլիպպոս